«ԷՆԵՐՁԻ ՍՓՓԼԱՅ» ՍՊԸ

Ֆինանսական հաշվետվություններ

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Անկախ աուդիտորական եզրակացության հետ միասին

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 1
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն 2
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 3
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն 4

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1.Գործունեության նկարագրություն 5
2.Հաշվետվությունների պատրաստման հիմունքները 5
3.Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը 5
4.Նոր և փոփոխված ստանդարտներ և մեկնաբանություններ 12
5.Թողարկված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ 12
6.Նշանակալի հաշվապահական դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ 12
7.Տրամադրված փոխառություններ 13
8.Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր 14
9.Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ 14
10.Ավանդներ 14
11.Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր 15
12.Հասույթ 15
13.Վաճառքի ինքնարժեք 15
14.Շահութահարկ 15
15.Պարտավորվածություններ, պայմանական պարտավորություններ 16
16.Գործարքներ կապակցված կողմերի հետ 17
17.Իրական արժեք և ռիսկերի կառավարում 18
18.Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր 20

ՖԻՆՍ ԱՈՒԴԻՏ ՓԲԸ

Հասցե՝ք, Երևան, Պարոնյան 9 բն. 12

Էլ. հասցե՝info@fins.am

Հեռ.՝+374 60 525 025

FINS AUDIT CJSC

Address:Yerevan, Paronyan str. 9 h. 12

Email:info@fins.am

Phone:+374 60 525 025

Անկախ աուդիտորական եզրակացություն

«ԷՆԵՐՋԻ ՍՓՓԼԱՅ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցներին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ԷՆԵՐՋԻ ՍՓՓԼԱՅ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար համապարփակ ֆինանսական արդյունքների, դրամական միջոցների հոսքերի և սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար համապարփակ ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները) (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների:

Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և կազմակերպության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը, կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:
Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովը պատասխանատու է Ընկերության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

ՖԻՆՍ ԱՈՒԴԻՏ ՓԲԸ

Հասցե՝ք, Երևան, Պարոնյան 9 բն. 12

Էլ. հասցե՝info@fins.am

Հեռ.՝+374 60 525 025

FINS AUDIT CJSC

Address:Yerevan, Paronyan str. 9 h. 12

Email:info@fins.am

Phone:+374 60 525 025

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ վերցրած, զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդ բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա իրադարձություններն ու հանգամանքները կարող են հանգեցնել Ընկերության գործունեության անընդհատության դադարեցմանը.
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովին, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«ՖԻՆՍ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ

26 Մայիսի, 2026թ.

ՀՀ, ք. Երևան

Տնօրեն Արմինե Ավագյան

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

(հազար ՀՀ դրամ)

	Ծան.	2025թ.	2024թ.
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ		11,829	12,898
Ոչ նյութական ակտիվներ		110	1,105
Հետաձգված հարկային ակտիվներ	14	9,471	10,106
		21,410	**24,109**
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ		1,185	1,185
Տրամադրված փոխառություններ	7	1,664,138	1,476,940
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	8	2,295,710	2,672,597
Ավանդներ	10	485,682	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	9	511,824	549,244
		4 958 539	**4,699,966**
Ընդամենը ակտիվներ		**4,979,949**	**4,724,075**
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	1.2	88,483	88,483
Կուտակված շահույթ		2,682,755	1,527,025
		2,771,238	**1,615,508**
Պարտավորություններ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ		-	558,966
		-	**558,966**
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ		1,067	5,542
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	11	2,192,844	2,383,603
Ընթացիկ հարկային պարտավորություններ		14,800	160,456
		2,208,711	**2,549,601**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		**4,979,949**	**4,724,075**

Սույն ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են ընկերության ղեկավարության կողմից՝

Գլխավոր տնօրեն՝ Ստեփան Վիրաբյան

Գլխավոր հաշվապահ՝ Անի Մկոյան

26 Մայիսի, 2026թ.

«ԷՆԵՐՋԻ ՍՓՓԼԱՅ» "ЭНЕРДЖИ СПЛАЙ" "ENERGY SUPPLY" 00242701

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար ՀՀ դրամ)

	Ծան.	*2025թ.*	*2024թ.*
Հասույթ	12	23,318,609	23,900,932
Վաճառքի ինքնարժեք	13	(21,716,993)	(21,854,945)
Համախառն շահույթ		**1,601,616**	**2,045,987**
Վարչական ծախսեր		(98,845)	(85,377)
Այլ գործառնական եկամուտ		12,778	42,581
Այլ գործառնական ծախսեր		(15,265)	(73,724)
Գործառնական գործունեությունից շահույթ		**1,500,284**	**1,929,465**
Ֆինանսական եկամուտ/(ծախս)		(79,946)	(117,802)
Զուտ վնաս փոխարժեքային տարբերություններից		(177)	4,144
Շահույթ նախքան շահութահարկով հարկումը		**1,420,161**	**1,815,807**
Շահութահարկի գծով ծախս	14	(264,431)	(342,911)
Հաշվետու տարվա շահույթ		**1,155,730**	**1,472,896**
Ընդամենը հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ եկամուտ		**1,155,730**	**1,472,896**

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար ՀՀ դրամ)

	Կանոնադրական կապիտալ	*Կուտակված շահույթ*	*Ընդամենը*
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**10**	**1,823,588**	**1,823,598**
Թողարկված բաժնետոմսեր	88,473		**88,473**
Ընդամենը հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ եկամուտ	-	1,472,896	**1,472,896**
Գործառնություններ սեփականատերերի հետ			
Շահաբաժիններ		(1,769,459)	**(1,769,459)**
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**88,483**	**1,527,025**	**1,615,508**
Ընդամենը հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ եկամուտ		1,155,730	1,155,730
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**88,483**	**2,682,755**	**2,771,238**

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար ՀՀ դրամ)

	Ծան.	*2025թ.*	*2024թ.*
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից			
Իրացումից մուտքեր		28,550,373	28,224,860
Մատակարարներին և այլ կրեդիտորներին վճարումներ		(26,168,227)	(25,024,929)
Աշխատակիցներին վճարումներ		(43,156)	(32,629)
Հարկերի վճարում բացառությամբ շահութահարկից		(775,777)	(1,310,763)
Պետական բյուջեի կողմից վերադարձված ԱԱՀ-ի գումար		113,000	-
Վճարված շահութահարկ		(393,378)	(425,927)
Այլ մուտքեր		1,431	1
Այլ վճարումներ		(4,250)	(11,742)
Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ գործառնական գործունեությունից		**1,280,016**	**1,418,871**
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից			
Տրված փոխառություններ		(565,418)	(1,892,601)
Տրված փոխառությունների մարում		418,513	396,696
Ադանդների տեղաբաշխում		(630,000)	-
Ավանդների հետ վերադարձ		150,000	-
Ստացված տոկոսներ		22,091	15,381
Հիմնական միջոցների ձեռքբերումներ		-	(13,662)
Ոչ նյութական ակտիվների դիմաց վճարումներ		(1,000)	(1,000)
Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ ներդրումային գործունեությունից		**(605 814)**	**(1,495,186)**
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից			
Վարկերից և փոխառություններից մուտքեր		257,000	-
Վարկերի և փոխառությունների մարում		(855,419)	-
Վճարված տոկոսներ		(113,266)	(104,054)
Տեղաբաշխված և վճարված կապիտալից մուտքեր		-	88,473
Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ ֆինանսավորման գործունեությունից		**(711,685)**	**(15,581)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ		**(37,483)**	**(91,896)**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների զուտ տարբերություններ		63	8
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հաշվետու տարվա սկզբում	9	**549,244**	**641,132**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հաշվետու տարվա վերջում	9	**511,824**	**549,244**

(հազար ՀՀ դրամ)

1.Գործունեության նկարագրություն

«ԷՆԵՐՋԻ ՍՓՓԼԱՅ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) հիմնադրվել է պրն. Արա Կիրակոսյանի կողմից 2021թ. սեպտեմբերի 14-ին՝ որպես շահույթ ստանալու նպատակով առևտրային կազմակերպություն և գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն: 2022թ. հունիսի 20-ին Ընկերության 100% բաժնեմասը օտարվել է պրն. Վանիկ Սաֆարյանին:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության 100% բաժնեմասը պատկանում է պրն. Վանիկ Սաֆարյանին (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ պրն. Վանիկ Սաֆարյանին):

Ընկերության գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Երևան , Բաղրամյան 1 ՆՐԲ,/Տ/15 :

Ընկերության հիմնական գործունեությունն է էլեկտրական էներգիայի մեծածախ շուկայում գնումը և ներկրումը և վաճառքը մեծածախ շուկայում՝ սպառողների հետ մատակարարման պայմանագրերի շրջանակներում, և արտահանումը: Ընկերությունն իր գործունեությունը իրականացնում է ՀՀ Հանրային Ծառայությունները Կարգավորող Հանձնաժողովի (ՀԾԿՀ) կողմից տրված՝ էլեկտրական էներգիայի մատակարարման ԼԷ N 0689 և էլեկտրական էներգիայի մեծածախ առևտրի ԼԷ N 0693 լիցենզիաների հիման վրա:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը ունեցել է 8 աշխատող (2024թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ ՝ 5 աշխատող):

1.2 Կանոնադրական կապիտալ

Ընկերության կանոնադրական կապիտալը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 88,483 հազար ՀՀ դրամ (2024թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ ՝ 88,483 հազար ՀՀ դրամ): Այն բաղկացած է մեկ բաժնեմասից, որի անվանական արժեքը 88,483 հազար դրամ է (2024թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ մեկ բաժնեմասից, որի անվանական արժեքը 88,483 հազար դրամ է):

2.Հաշվետվությունների պատրաստման հիմունքները

Ընդհանուր

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն (ՖՀՄՍ):

Ընկերությունը պարտավորված է իրականացնել հաշվապահական հաշվառումը և պատրաստել ֆինանսական հաշվետվությունները ՀՀ դրամով՝ հաշվապահական հաշվառման ՀՀ օրենսդրությանը և դրանից բխող ցուցումներին համապատասխան:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի սկզբունքի հիման վրա, ինչպես բացահայտված է ստորև բերված հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ:

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով (ՀՀ դրամ), և բոլոր արժեքները կլորացված են մինչև հազար ՀՀ դրամ, եթե այլ բան նշված չէ:

3.Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներն ու դրանց համարժեքները ներառում են կանխիկ միջոցները և բանկային հաշիվների մնացորդները:

Ավանդադրված միջոցները դասակարգվում են որպես կարճաժամկետ, եթե նրանց մարման ժամկետը հաշվետու ժամանակաշրջանից հետո մինչև 90 օր է:

(հազար ՀՀ դրամ)

3.Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը (շարունակություն)

Կանխավճարներ

Կանխավճարները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկման կորստի գծով պահուստը:

Կանխավճարը դասակարգվում է որպես ոչ ընթացիկ, երբ դրա հետ կապված ապրանքներն ու ծառայությունները ակնկալվում են ձեռք բերվել մեկ տարուց հետո, կամ երբ այն վերաբերում է այնպիսի ակտիվի, որը սկզբնական ճանաչման պահին կդասակարգվեր որպես ոչ ընթացիկ: Ակտիվների ձեռքբերման համար տրված կանխավճարները տեղափոխվում են ակտիվի հաշվեկշռային արժեք, երբ Ընկերությունը ակտիվի նկատմամբ ձեռք է բերում վերահսկողություն, և հավանական է, որ ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Ընկերություն: Այլ կանխավճարները ծախսագրվում են ֆինանսական արդյունքներում, երբ ստացվում են դրանց հետ կապված ապրանքներն ու ծառայությունները: Եթե առկա է որևէ հայտանիշ, որ կանխավճարի հետ կապված ակտիվները, ապրանքներն ու ծառայությունները չեն ստացվելու, ապա կանխավճարի հաշվեկշռային արժեքը համարժեք կերպով նվազեցվում է, և համապատասխան արժեզրկումից կորուստը ճանաչվում է տվյալ տարվա ֆինանսական արդյունքներում:

Ֆինանսական ակտիվներ

Սկզբնական ճանաչում և չափում

Սկզբնական ճանաչման ժամանակ ֆինանսական ակտիվները դասակարգվում և հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով, իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Սկզբնական ճանաչման ժամանակ պարտքային գործիքներ հանդիսացող ֆինանսական ակտիվների դասակարգումը կախված է վերջիններիս պայմանագրային դրամական հոսքերի բնույթից և դրանք կառավարելու Ընկերության բիզնես մոդելից: Բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսավորման բաղադրիչ, կամ որոնց համար Ընկերությունն օգտագործել է կիրառելի նպատակահարմար մոտեցում, Ընկերությունը սկզբնապես ֆինանսական ակտիվը չափում է իր իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվը չի չափվում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Այն առևտրային դեբիտորական պարտքերը, որոնք չեն պարունակում էական ֆինանսավորման բաղադրիչ, կամ որոնց համար Ընկերությունը օգտագործել է կիրառելի նպատակահարմար մոտեցում և որոնք ունեն 1 տարի և պակաս ժամկետայնություն, չափվում են ՖՀՄՍ 15-ով սահմանված գործարքի գնով:

Որպեսզի ֆինանսական ակտիվը դասակարգվի և չափվի ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով, անհրաժեշտ է, որ վերջինս առաջացնի դրամական հոսքեր, որոնք «բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներն
են (SPPI): Այս գնահատումը կոչվում է SPPI թեստ և կատարվում է գործիքի մակարդակով: Ֆինանսական ակտիվները, որոնց դրամական հոսքերը «բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներն» չեն, դասակարգվում և չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով անկախ Ընկերության բիզնես մոդելից:

Ֆինանսական ակտիվների կառավարման Ընկերության բիզնես մոդելը ներկայացնում է, թե ինչպես է դրամական հոսքեր ձևավորելու նպատակով վերջինս կառավարում իր ֆինանսական ակտիվները: Բիզնես մոդելը սահմանում է, թե արդյոք դրամական հոսքերը ձևավորվում են պայմանագրային դրամական հոսքերի հավաքագրումից, ֆինանսական ակտիվների վաճառքից կամ երկուսից միաժամանակ:

Ֆինանսական ակտիվների ձեռքբերումները կամ վաճառքները, որոնք պահանջում են ակտիվների մատակարարում շուկայում գործող կարգավորման միջոցով կամ գործարար սովորույթով (սովորական գործարքներում) սահմանված ժամկետի ընթացքում, ճանաչվում են գործարքի ամսաթվին, այսինքն՝ այն ամսաթվին, երբ Ընկերությունը ձեռք է բերել կամ վաճառել ակտիվը:

(հազար ՀՀ դրամ)

3.Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը (շարունակություն)

Ֆինանսական ակտիվներ (շարունակություն)

Հետագա չափում

Հետագա չափման նպատակներով ֆինանսական ակտիվները դասակարգվում են չորս դասերից մեկում.

- Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ (պարտքային գործիքներ),
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ, որոնց կուտակված օգուտները և կորուստները ապաճանաչման ժամանակ վերադասակարգվում են (պարտքային գործիքներ),
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ, որոնց կուտակված օգուտները կամ կորուստները ապաճանաչման ժամանակ չեն վերադասակարգվում (կապիտալի գործիքներ),
- Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ:

Ընկերությանն առավել բնորոշ է ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների դասը: Ընկերությունը ֆինանսական ակտիվները չափում է ամորտիզացված արժեքով, եթե բավարարում են ստորև թվարկված երկու պայմանները.

- ► Ֆինանսական ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է ֆինանսական ակտիվները պահելը՝ պայմանագրային դրամական հոսքերը հավաքագրելու նպատակով, և
- ► Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական միջոցների հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներն են:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների հետագա չափումներն իրականացվում են՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, և ենթակա են արժեզրկման գնահատման: Ստացված տոկոսները ճանաչվում են ֆինանսական եկամտի կազմում շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Օգուտներն ու կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում, եթե ակտիվը ապաճանաչվում է, ենթարկվում է փոփոխությունների կամ արժեզրկվում է:

Ընկերության ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներում ներառվում են առևտրային և այլ դեբիտորական պարտքերը, դրամական միջոցները և դրանց համարժեքները և տրամադրված փոխառությունները:

Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվը (կամ, որտեղ կիրառելի է, ֆինանսական ակտիվի մի մասը, կամ համանման ֆինանսական ակտիվների խմբի մի մասը) ապաճանաչվում է, երբ

- ► ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցրել են իրենց ուժը, կամ
- ► Ընկերությունը փոխանցել է ակտիվից դրամական միջոցների հոսքերի ստացման իրավունքները կամ, փոխանցման համաձայնագրի համաձայն, ստանձնել է ստացված դրամական միջոցների հոսքերը ամբողջությամբ երրորդ կողմին վճարելու պարտականություն առանց էական ուշացման, և ա) Ընկերությունը փոխանցել է, ըստ էության, ակտիվի բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ բ) Ընկերությունը չի փոխանցել կամ պահպանել, ըստ էության, ակտիվի բոլոր ռիսկերն ու հատույցները, բայց փոխանցել է ակտիվի հսկողությունը:

Երբ Ընկերությունը փոխանցել է ակտիվից դրամական միջոցների հոսքերի ստացման իրավունքները կամ ձեռք է բերել փոխանցման համաձայնագիր, վերջինս պետք է գնահատի, թե ինչ չափով է պահպանել ակտիվի սեփականության հետ կապված ռիսկերն ու հատույցները: Երբ Ընկերությունը ո՛չ փոխանցել է, ո՛չ պահպանել է ակտիվի, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, ոչ էլ փոխանցել է ակտիվի հսկողությունը, ապա Ընկերությունը շարունակում է ճանաչել փոխանցված ակտիվը իր շարունակվող ներգրավվածության չափով: Այս դեպքում, Ընկերությունը նաև ճանաչում է դրա հետ կապված պարտավորությունը: Փոխանցված ակտիվը և դրա հետ կապված պարտավորությունը չափվում են այն հիմքով, որը արտացոլում է Ընկերության պահպանած իրավունքներն ու պարտականությունները:

(հազար ՀՀ դրամ)

3.Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը (շարունակություն)

Ֆինանսական ակտիվներ (շարունակություն)

Շարունակվող ներգրավվածությունը, որը ձեռք է բերում փոխանցված ակտիվի նկատմամբ երաշխիքի ձև, չափվում է ակտիվի սկզբնական հաշվեկշռային արժեքի և այն առավելագույն արժեքից նվազագույնով, որը Ընկերությունից կարող է պահանջվել մարել:

Արժեզրկում

Ընկերությունը ճանաչում է ակնկալվող վարկային կորուստների պահուստ բոլոր այն պարտքային գործիքների համար, որոնք չեն հաշվառվում և չափվում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Ակնկալվող վարկային կորուստների պահուստը հիմնված է պայմանագրի համաձայն պայմանագրային դրամական միջոցների հոսքերի և Ընկերության կողմից ստացվելիք ակնկալվող դրամական հոսքերի տարբերության վրա՝ զեղչված մոտարկված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով: Ակնկալվող դրամական միջոցների հոսքերը ներառում են գրավադրված միջոցների վաճառքից ստացվող դրամական միջոցների հոսքերը կամ պայմանագրային պայմանների մաս կազմող պարտքային դիրքի այլ ամրացումները:

Ակնկալվող վարկային կորուստների պահուստները ճանաչվում են երկու փուլով: Պարտքային ռիսկերի ենթարկվածության բոլոր տեսակների համար, որոնց պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից ի վեր էականորեն չի ավելացել, ակնկալվող վարկային կորուստների պահուստները ձևավորվում են այն պարտքային կորուստների համար, որոնք առաջանում են հաջորդող 12 ամիսների ընթացքում դեֆոլտի հավանական դեպքերի արդյունքում (12-ամսյա ժամանակահատվածում ակնկալվող վարկային կորուստներ): Պարտքային ռիսկերի ենթարկվածության բոլոր տեսակների համար, որոնց պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից ի վեր էականորեն ավելացել է, ակնկալվող վարկային կորուստների պահուստը պետք է ձևավորել ակտիվի ողջ ժամկետայնության ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների համար՝ անկախ դեֆոլտի տեղի ունենալու ժամկետից (ակտիվի ողջ ժամկետայնության ընթացքում ակնկալվող վարկային կորուստներ):

Առևտրային դեբիտորական պարտքերի (պայմանական գնանշմանը ոչ ենթակա) և այլ դեբիտորական պարտքերի համար, որոնք ժամկետանց են 12 ամսից ավելի քիչ, Ընկերությունը կիրառում է ակնկալվող վարկային կորուստների հաշվարկման պարզեցված մոտեցումը, ինչպես թույլատրվում է ՖՀՄՍ 9-ով: Հետևաբար,Ընկերությունը հետևում է պարտքային ռիսկի փոփոխություններին և ակնկալվող վարկային կորուստները հաշվարկում է Մուդիզի կողմից հրապարակված սեկտորների դեֆոլտի հավանականության հիման վրա:

Ամորտիզացված արժեքով պահվող այլ ֆինանսական ակտիվների համար (որոնք ժամկետանց են 12 ամսից ավել), ակնկալվող վարկային կորուստները հիմնված են 12-ամսյա ժամանակահատվածում ակնկալվող վարկային կորուստների վրա: 12-ամսյա ժամանակահատվածում ակնկալվող վարկային կորուստները ակտիվի ողջ ժամկետայնության ընթացքում ակնկալվող վարկային կորուստների մի մասն են կազմում, որը առաջանում է ֆինանսական գործիքի դեֆոլտի դեպքում, որը հավանական է, որ տեղի կունենա հաշվետու ժամանակաշրջանից հետո 12 ամսվա ընթացքում: Սակայն, այն դեպքում, երբ ակտիվի սկզբնական ճանաչումից ի վեր առկա է պարտքային ռիսկի էական ավելացում, պահուստը պետք է հիմնված լինի ակտիվի ողջ ժամկետայնության ընթացքում ակնկալվող վարկային կորուստների վրա:

Սահմանելու համար, թե արդյոք ֆինանսական ակտիվի պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից ի վեր էական ավելացել է, թե՝ ոչ, և ակնկալվող վարկային կորուստները գնահատելու համար Ընկերությունը հաշվի է առնում ողջամիտ և հուսալի տեղեկատվությունը, որը համապատասխանում է և հասանելի է առանց ավելորդ ծախսի և ջանքերի: Սա ներառում է ինչպես քանակական, այնպես էլ որակական տեղեկատվություն և վերլուծություն՝ հիմնված Ընկերության պատմական փորձի և պարտքերի գնահատման, ներառյալ՝ ապագային միտված տեղեկատվության վրա:

Ընկերությունը ֆինանսական ակտիվը համարում է դեֆոլտ եղած, եթե դրա գծով պայմանագրային վճարումները 90 օրից ավել ժամկետանց են: Այնուամենայնիվ, որոշակի դեպքերում, Ընկերությունը կարող է ֆինանսական ակտիվը համարել դեֆոլտ եղած, եթե ներքին կամ արտաքին տեղեկատվությունը ցույց է տալիս, որ հավանական չէ, որ Ընկերությունը մինչև Ընկերության կողմից պահվող որևէ պարտքային դիրքի ամրապնդումը հաշվի առնելը ամբողջությամբ կստանա պայմանագրային գումարը: Ֆինանսական ակտիվը դուրս է գրվում, եթե առկա չէ պայմանագրային դրամական միջոցների հոսքերի վերականգնման ողջամիտ ակնկալիք, և սովորաբար տեղի է ունենում այն դեպքում, եթե 1 տարուց ավել ժամկետանց է և ենթակա չէ հարկադրված գործողության:

(հազար ՀՀ դրամ)

3.Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը (շարունակություն)

Ֆինանսական ակտիվներ (շարունակություն)

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում Ընկերությունը գնահատում է, թե արդյոք ամորտիզացված արժեքով պահվող ֆինանսական ակտիվները արժեզրկված են, թե՝ ոչ: Ֆինանսական ակտիվը արժեզրկված է, եթե տեղի են ունեցել մեկ կամ ավելի դեպքեր, որոնք ունեցել են բացասական ազդեցություն ֆինանսական ակտիվի գնահատված ապագա դրամական հոսքերի վրա:

Ֆինանսական պարտավորություններ

Սկզբնական ճանաչում և չափում

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են սկզբնական ճանաչման ժամանակ որպես իրական արժեքով հաշվառվող շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորություններ, վարկեր և փոխառություններ, կրեդիտորական պարտքեր, կամ անհրաժեշտության դեպքում ածանցյալ գործիքներ՝ նախատեսված որպես արդյունավետ հեջավորման գործիքներ: Բոլոր ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, իսկ վարկերի ու փոխառությունների և կրեդիտորական պարտքերի դեպքում՝ գործարքի հետ կապված ուղղակիորեն վերագրելի ծախսումները զուտացված:

Հետագա չափումը

Ֆինանսական պարտավորությունների չափումը կախված է դրանց դասակարգումից, ինչպես նկարագրված է ստորև.

Իրական արժեքով հաշվառվող շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորություններ

Իրական արժեքով հաշվառվող շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորությունները ներառում են վաճառքի համար պահվող ֆինանսական պարտավորությունները և սկզբնական ճանաչման ժամանակ որպես իրական արժեքով հաշվառվող շահույթի կամ վնասի միջոցով չափվող նախատեսված ֆինանսական պարտավորությունները:

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես վաճառքի համար պահվող, եթե դրանք ձեռավորվել են առաջիկայում հետգնման նպատակով: Այս դասը ներառում է նաև Ընկերության ածանցյալ ֆինանսական գործիքները, որոնք հեջավորման գործարքներում նախատեսված չեն որպես հեջավորման գործիքներ, ինչպես սահմանված է ՖՀՄՍ 9-ում: Առանձնացված ներկառուցված ածանցյալ գործիքները նույնպես դասակարգվում են որպես վաճառքի համար պահվող, եթե դրանք նախատեսված չեն որպես արդյունավետ հեջավորման գործիքներ: Վաճառքի համար պահվող ֆինանսական պարտավորությունների օգուտներն ու կորուստները ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Վարկեր և փոխառություններ, թողարկված պարտատոմսեր ու առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Սկզբնական ճանաչումից հետո, տոկոսակիր վարկերն ու փոխառություններն ու առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Օգուտներն ու կորուստները ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, երբ պարտավորությունները ապաճանաչվում են, ինչպես նաև արդյունավետ տոկոսադրույքի ամորտիզացիայի գործընթացի միջոցով:

Ամորտիզացված արժեքը հաշվարկվում է՝ հաշվի առնելով ձեռքբերման ժամանակ ցանկացած զեղչ կամ հավելավճար, ինչպես նաև արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մաս հանդիսացող վճարները կամ ծախսերը: Արդյունավետ տոկոսադրույքի ամորտիզացիան ներառվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Այս դասը հիմնականում կիրառվում է տոկոսակիր վարկերի և փոխառությունների ու առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի դեպքում:

(հազար ՀՀ դրամ)

3.Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը (շարունակություն)

Ֆինանսական պարտավորություններ (շարունակություն)

Ապաճանաչում

Ֆինանսական պարտավորությունը ապաճանաչվում է, երբ դրա հետ կապված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցրած է ճանաչվում: Երբ գոյություն ունեցող ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է միևնույն փոխառուի՝ էականորեն տարբեր պայմաններով մեկ այլ պարտավորությամբ, կամ գոյություն ունեցող պարտավորության պայմանները էականորեն ձևափոխվում են, ապա այդպիսի փոխարինումը կամ ձևափոխումը դիտվում է որպես սկզբնական պարտավորության ապաճանաչում և նոր պարտավորության ճանաչում: Համապատասխան հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մեջ:

Ֆինանսական գործիքների հաշվանցումը

Ֆինանսական ակտիվներն ու ֆինանսական պարտավորությունները հաշվանցվում են, և զուտ գումարը ներկայացվում է ֆինանսական վիճակի մասին առանձին հաշվետվությունում, եթե առկա է ճանաչված գումարների հաշվանցման ներկայումս իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվներն իրացնելու և պարտավորությունները մարելու մտադրություն:

Հասույթ

Ընկերության հաճախորդների հետ պայմանագրերից հասույթը հիմնականում առաջանում է էլեկտրական էներգիայի վաճառքից:

Որոշելու համար, թե արդյոք անհրաժեշտ է ճանաչել հասույթ, թե ոչ, Ընկերությունն առաջնորդվում է 5-քայլի գործընթացով.

- Բացահայտել հաճախորդի հետ պայմանագիրը
- Բացահայտել կատարման պարտականությունները
- Որոշել գործարքի գինը
- Բաշխել գործարքի գինը կատարման պարտականությունների միջև
- Ճանաչել հասույթը, երբ կատարման պարտականությունը(ները) բավարարված են

Հասույթը ճանաչվում է կամ ժամանակի մեջ որևէ պահին կամ ժամանակի ընթացքում, երբ Ընկերությունը բավարարում է կատարման իր պարտականությունը՝ հաճախորդին փոխանցելով խոստացված ապրանքը կամ ծառայությունը:

Էլեկտրական էներգիայի վաճառքից հասույթ

Էլեկտրական էներգիայի վաճառքից հասույթը ճանաչվում է, երբ վերահսկումը փոխանցվում է գնորդին: Վերահսկումը հիմնականում փոխանցվում է, երբ հոսանքը հաղորդվում է հաճախորդին: Վերահսկողության փոխանցման պահը որոշելու համար նման դեպքերում չի պահանջվում բարդ դատողություն: Երբ հոսանքը հաղորդվել է համաձայնեցված վայր, ապա դրանից հետո Ընկերությունը այլևս չունի հսկողության իրավունք, սովորաբար ձեռք է բերում վճարման ստացման իրավունք և չի պահպանում ծառայության հետ կապված նշանակալի ռիսկեր կամ հատույցներ:

Ֆինանսական եկամուտ և ծախս

Ընկերության ֆինանսական եկամուտը և ֆինանսական ծախսը ընդգրկում են.

- Տոկոսային եկամուտ;
- Տոկոսային ծախս;

Տոկոսային եկամուտը կամ ծախսը ճանաչվում է՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

(հազար ՀՀ դրամ)

3.Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը (շարունակություն)

Շահութահարկ

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ուղղակիորեն սեփական կապիտալում կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված տարրերին:

Ընթացիկ հարկը տվյալ ժամանակաշրջանի հարկվող շահույթի գծով վճարման/ (փոխհատուցման) ենթակա շահութահարկի գումարն է: Ընթացիկ հարկը ճանաչվում է որպես եկամուտ կամ ծախս և ներառվում է տվյալ ժամանակաշրջանի զուտ շահույթի կամ վնասի մեջ:

Ընկերության հետաձգված հարկերը (հետաձգված հարկային պարտավորությունները և հետաձգված հարկային ակտիվները) պայմանավորված են ժամանակավոր տարբերությունների (հարկվող և նվազեցվող ժամանակավոր տարբերություններ) և չօգտագործված հարկային կորուստի հետագա տարիներ փոխանցմամբ:

Ժամանակավոր տարբերությունների հետևանքով առաջացած հետաձգված հարկերը հաշվարկվում են հաշվեկշռային մեթոդով, հիմնվելով ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար օգտագործված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկման նպատակներով օգտագործված գումարների (հարկային բազայի) միջև ժամանակավոր տարբերությունների վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով այն չափով, որքանով հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը:

Աշխատակիցների հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով պարտականությունները չափվում են առանց զեղչման և ծախսագրվում են համապատասխան ծառայությունը մատուցելուց հետո: Պարտավորությունը ճանաչվում է այն գումարի չափով, որն ակնկալվում է վճարել որպես կարճաժամկետ դրամական միջոցների տեսքով պարգևավճար, եթե Ընկերությունն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն այդ գումարը վճարելու որպես աշխատողի կողմից մատուցված անցյալ ծառայության արդյունք և կարող է արժանահավատորեն գնահատել պարտականությունը:

Արտարժութային գործառնություններ

Արտարժույթով գործարքները սկզբնապես ճանաչվում են ֆունկցիոնալ արժույթով, փոխարկվում են կիրառելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Դրամային հոդվածների փոխարժեքային տարբերություններից օգուտը կամ վնասը իրենից ներկայացնում է հաշվետու տարվա սկզբի դրությամբ ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, արդյունավետ տոկոսադրույքով և ժամանակաշրջանի ընթացքում վճարումներով ճշգրտված ամորտիզացված արժեքի, և արտարժույթով արտահայտված ու հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ գործող փոխարժեքով փոխարկված ամորտիզացված արժեքի տարբերությունը:

Պատմական արժեքով չափվող արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածները փոխարկվում են գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Արտարժույթի փոխարկումից առաջացող տարբերությունները ճանաչվում են շահույթի կամ վնասի կազմում:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից 1 ԱՄՆ դոլարի համար հայտարարված փոխարժեքը կազմում էր 381.36 ՀՀ դրամ (2024թ.՝ 396.56 ՀՀ դրամ), 1 եվրոյի համար՝ 449.01 ՀՀ դրամ (2024թ.՝ 413.89 ՀՀ դրամ),1 Ռուսական ռուբլու համար՝ 4.8711 ՀՀ դրամ (2024թ.՝ 3.71 ՀՀ դրամ):

(հազար ՀՀ դրամ)

4.Նոր և փոփոխված ստանդարտներ և մեկնաբանություններ

Ընթացիկ տարում Ընկերությունն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2025թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

ՀՀՄՍ 21 «Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքներ» ստանդարտի փոփոխությունը՝ կապված «Փոխանակելիության բացակայության» հետ առաջին անգամ կիրառվել է 2025թ., որը սահմանում է պահանջներ՝ գնահատելու, թե երբ է արժույթը փոխարկելի այլ արժույթի նկատմամբ, և երբ՝ ոչ: Ստանդարտի այս փոփոխության ընդունումը ազդեցություն չի ունեցել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

5.Թողարկված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Խմբի կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականությունում՝ սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխություններն էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև.

- *«Ֆինանսական գործիքների դասակարգման և չափման փոփոխություններ» (ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ)*
- *ՖՀՄՍ 18 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում»*

6.Նշանակալի հաշվապահական դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ

Գնահատումներ, ենթադրություններ և դատողություններ

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է Ընկերության ղեկավարությունից կիրառել դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն եկամուտների ու ծախսերի, ակտիվների, պարտավորությունների և կից բացահայտումների վրա, ինչպես նաև պայմանական պարտավորությունների բացահայտումների վրա առանձին ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ: Գնահատումները և ենթադրությունները շարունակաբար վերլուծվում են և հիմնված են ղեկավարության փորձի և այլ գործոնների վրա, ներառյալ ապագա իրադարձությունների սպասումները, որոնք կարող են տեղի ունենալ որոշակի հանգամանքների պարագայում: Այս գնահատումների և ենթադրությունների վերաբերյալ անորոշությունը կարող է հանգեցնել այնպիսի հետևանքների, որոնք կպահանջեն հետագայում ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրտումներ:Առավել էական ազդեցություն ունեցող գնահատումները և դատողությունները հետևյալն են.

Առևտրայի դեբիտորական պարտքերի և այլ ֆինանսական ակտիվների արժեզրկում - ծնթ. 7,8,9 և 10

Ղեկավարությունը պարբերաբար վերանայում է իր ֆինանսական ակտիվների արժեզրկման հայտանիշները: Ղեկավարությունը անհրաժեշտության դեպքում կիրառում է իր մասնագիտական դատողությունները՝ գնահատելու համար ցանկացած արժեզրկումից կորուստների գումարը:

6.Նշանակալի հաշվապահական դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ (շարունակություն)

Գնահատումներ, ենթադրություններ և դատողություններ (շարունակություն)

Ղեկավարությունը գնահատում է ապագա դրամական հոսքերում փոփոխությունները՝ հիմնվելով այն դիտարկելի տվյալների վրա, որոնք մատնանշում են գործընկերների վճարունակության մակարդակների բացասական փոփոխությունները, կամ ազգային կամ տեղական տնտեսական իրավիճակների փոփոխությունները, որոնք որևէ կերպ առնչվում են ակտիվների արժեզրկման հետ: Սեփական փորձից ելնելով՝ Ընկերությունը կիրառում է իր մասնագիտական դատողությունները ակտիվների վերաբերյալ դիտարկելի տեղեկատվության ճշգրտման համար՝ ընթացիկ իրավիճակը արտացոլելու նպատակով:

Ընկերության առևտրային դեբիտորական պարտքերի ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 5,276 հազար ՀՀ դրամ (2024թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ ՝ 8,992 հազար ՀՀ դրամ), իսկ Տրամադրված փոխառությունների գծով պահուստը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 44,813 հազար ՀՀ դրամ (2024թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 44,625 հազար ՀՀ դրամ):

Իրական արժեքի գնահատում - ծնթ. 17

Ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը որոշելու համար Ղեկավարությունը կիրառում է գնահատման մեթոդ, որտեղ ակտիվ շուկայական գնանշումներ չկան: Սա ենթադրում է գնահատումների և ենթադրությունների մշակում, որոնք կհամապատասխանեն շուկայի մասնակիցների կողմից գործիքի գնահատմանը:Ղեկավարությունն իր ենթադրությունները հիմնավորում է հնարավորինս դիտելի տվյալներով, բայց դրանք միշտ չեն հասանելի: Այդ դեպքում ղեկավարությունն օգտագործում է առկա լավագույն տեղեկատվությունը: Գնահատված իրական արժեքները կարող են տարբեր լինել փաստացի գներից, որոնք կգործեն հաշվետու ամսաթվի դրությամբ

Ընկերությունը իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման մեթոդների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

7.Տրամադրված փոխառություններ

	31 դեկտեմբերի 2024թ	*31 դեկտեմբերի 2024թ.*
Տրամադրված փոխառություններ	1,708,951	1,521,565
Ակնկալվող պարտքային կորստի պահուստ	(44,813)	(44,625)
Ընդամենը Տրամադրված փոխառություններ	**1,664,138**	**1,476,940**

Փոխառության դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ կատարվում է պայմանագրերի մարման ժամկետի հիման վրա:
Ընկերությանը Տրամադրված փոխառությունների ակնկալվող վարկային կորուստները հիմնված են 12-ամսյա ժամանակահատվածում ակնկալվող վարկային կորուստների վրա և արժեզրկման չափման նպատակով դասակարգված են Փուլ 1-ում:
Ընկերության փոխառությունները տրամադրված են ՀՀ դրամով և ունեն մինչև 365 օր ժամկետայնություն:

(հազար ՀՀ դրամ)

8.Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	31 դեկտեմբերի 2025թ	*31 դեկտեմբերի 2024թ.*
Առևտրային դեբիտորական պարտքեր էլ.էներգիայի վաճառքից	2,123,983	2,470,854
Ակնկալվող պարտքային կորստի պահուստ	(5,276)	(8,992)
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	**2,118,707**	**2,461,862**
Կանխավճարներ և այլ դեբիտորական պարտքեր	177,003	210,735
Ընդամենը առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	**2,295,710**	**2,672,597**

Ամորտիզացված արժեքով դասակարգված առևտրային և այլ դեբիտորական պարտքերի իրական արժեքը էականորեն չի տարբերվում հաշվեկշռային արժեքից:
Առևտրային դեբիտորական պարտքերը ոչ տոկոսակիր են և հիմնականում ունեն 30-90 օր ժամկետայնություն:
Հաշվետու ամսաթվի դրությամբ առևտրային դեբիտորական պարտքերը ժամկետանց չեն և արժեզրկման չափման նպատակով դասակարգված են Փուլ 1-ում:

9.Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	Արժույթ	*31 դեկտեմբերի 2025թ*	*31 դեկտեմբերի 2024թ*
Ընթացիկ հաշիվներ բանկերում	ՀՀ դրամ	511,810	549,230
Կանխիկ միջոցներ դրամարկղում	ՀՀ դրամ	14	14
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ		**511,824**	**549,244**

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (2024թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ նույնպես) Ընկերության դրամական միջոցները տեղաբաշխված են ՀՀ վստահելի առևտրային բանկերում: Դրամական միջոցների և դրանց համարժեքների բոլոր մնացորդները դասակարգված են Փուլ 1-ում:

10.Ավանդներ

				31 դեկտեմբերի 2025թ	
հազ. դրամ	**Արժույթ**	**Արդյունավետ տոկոսադրույք**	**Մարման տարի**	**Անվանական արժեք**	**Հաշվեկշռային արժեք**
Բանկային ավանդ՝ BA3 վարկանիշով	ՀՀ դրամ	7.45%	2026	485,682	485,682

Ընկերության ավանդները տեղաբաշխված են ՀՀ վստահելի առևտրային բանկում: Ավանդների մնացորդները դասակարգված են Փուլ 1-ում:

(հազար ՀՀ դրամ)

11.Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

	31 դեկտեմբերի 2025թ	*31 դեկտեմբերի 2024թ.*
Էլ.Էներգիայի ձեռքբերման գծով	1,749,944	2,093,056
Ստացված կանխավճարներ	240,398	237
Ստացված ծառայությունների գծով	189,620	276,630
Այլ կրեդիտորական պարտքեր	12,882	13,680
Ընդամենը առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	**2,192,844**	**2,383,603**

Ամորտիզացված արժեքով դասակարգված առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի իրական արժեքը էականորեն չի տարբերվում հաշվեկշռային արժեքից: Ընկերության ենթարկվածությունը պարտքային, շուկայական և իրացվելիության ռիսկերին ներկայացված են Ծան. 17-ում:

12.Հասույթ

	2025թ.	*2024թ.*
Էլ.Էներգիայի վաճառք ՀՀ Տարածքում	23,318,609	23,900,932
Ընդամենը Հասույթ	**23,318,609**	**23,900,932**

Էլեկտրաէներգիայի վաճառքից հասույթը ճանաչվում է ամսական հիմունքով՝ փաստացի փոխանցված էլեկտրաէներգիայի ծավալի հիման վրա:

13.Վաճառքի ինքնարժեք

	2025թ.	*2024թ.*
Վաճառված էլ. Էներգիայի ինքնարժեք	18,502,722	19,539,463
Էլ.Էներգիայի բաշխման և հաղորդման ծառայություններ	1,233,886	1,293,784
Ստացված հզորություն	1,369,758	756,053
Շուկայի և էլ.Էներգիայի համակարգի օպերատորի ծառայություններ	596,273	245,636
Այլ	14,354	20,009
Ընդամենը վաճառքի ինքնարժեք	**21,716,993**	**21,854,945**

14.Շահութահարկ

Հաշվետու տարվա համար ՀՀ Հարկային օրենսգրքով շահութահարկի դրույքաչափը սահմանված է 18% (2024թ.՝18%):

Շահույթում կամ վնասում ճանաչված գումարներ

Շահութահարկի գծով ծախսի հիմնական բաղադրիչներն են՝

	2025թ.	*2024թ.*
Շահութահարկի գծով ծախս	263,796	343,594
Հետաձգված հարկերի գծով ժամանակավոր տարբերությունների առաջացում և վերականգնում	635	(683)
Շահութահարկի գծով ծախս/(փոխհատուցում)	**264,431**	**342,911**

(հազար ՀՀ դրամ)

14.Շահութահարկ (շարունակություն)

Շահութահարկի արդյունավետ տոկոսադրույքի համադրում

	2025թ.		2024թ.	
	Հազ. դրամ	%	Հազ. դրամ	%
Շահույթ/(վնաս) մինչև հարկումը	**1,420,161**		**1,815,807**	
Շահութահարկ սահմանված դրույքաչափով	255,629	18	326,834	18
Այլ չնվազեցվող ծախսերի/(չհարկվող եկամուտների) հարկային հետևանքը, զուտ	8,802	0.6	16,077	0.9
Շահութահարկի գծով ծախսը/(փոխհատուցումը) և արդյունավետ տոկոսադրույքը	**264,431**	**18.6**	**342,911**	**18.9**

Հետաձգված հարկային ակտիվներ/(պարտավորություններ)

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները դեկտեմբերի 31-ի դրությամբ և դրանց ժամանակավոր տարբերությունների շարժը տարվա ընթացքում – ակտիվ/(պարտավորություն) ներկայացված է ստորև.

	2025թ.հունվարի 1-ի դրությամբ	(Հաշվեգրված) / նվազեցված շահույթի կամ վնասի հաշվին	2025թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տրամադրված փոխառություններ	8,033	34	8,067
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	2,073	(669)	1,404
Զուտ արդյունք-հետաձգված հարկային ակտիվներ/(պարտավորություններ)	**10,106**	**(635)**	**9,471**

	2024թ.հունվարի 1-ի դրությամբ	(Հաշվեգրված) / նվազեցված շահույթի կամ վնասի հաշվին	2024թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տրամադրված փոխառություններ	8,347	(314)	8,033
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	1,076	997	2,073
Զուտ արդյունք-հետաձգված հարկային ակտիվներ/(պարտավորություններ)	**9,423**	**683**	**10,106**

15.Պարտավորվածություններ, պայմանական պարտավորություններ

Ընկերության գործառնական միջավայրը

Հայաստանի Հանրապետությունը շարունակում է տնտեսական բարեփոխումները և իրավական, հարկային ու օրենսդրական համակարգերի զարգացումը՝ շուկայական տնտեսության պահանջներին համապատասխան:

Հայաստանի տնտեսության ապագա կայունությունը առավելապես կախված է այս բարեփոխումներից և զարգացումներից, ինչպես նաև կառավարության կողմից իրականացվող տնտեսական, ֆինանսական և դրամավարկային քաղաքականությունների արդյունավետությունից:

Ներկայումս Ղեկավարությունը հետևում է միկրո և մակրոտնտեսական պայմանների փոփոխության հնարավոր ազդեցությանը Ընկերության ֆինանսական վիճակի և գործունեության վրա:

(հազար ՀՀ դրամ)

15.Պարտավորվածություններ, պայմանական պարտավորություններ (շարունակություն)

Պայմանական պարտավորություններ

Ընկերությունը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ունի 10,410,000 հազար դրամի երաշխիք (2024թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 10,410,000 հազար ՀՀ դրամ) ՀՀ առևտրային բանկերից՝ Մատակարարվող էլեկտրաէներգիայի (հզորության) և մատուցվող ծառայությունների գծով պարտավորությունների կատարման ապահովման համար: Երաշխիքներից չի ակնկալվում ոչ մի պարտավորություն առաջացում:

16.Գործարքներ կապակցված կողմերի հետ

Ընկերության հիմնադիրները բացահայտված են Ծանոթագրություն 1-ում: Ղեկավարությունը գտնում է, որ Ընկերությունը տիրապետում է կապակցված կողմերի հետ գործարքների որոշման և պատշաճ կերպով բացահայտման համապատասխան գործընթացներին:

Ընկերությունը կապակցված կողմերի հետ կատարում է այնպիսի գործարքներ, որոնք համարժեք են անկախ կողմերի հետ գործարքներին:

Գործարքներ առանցքային ղեկավար անձնակազմի հետ

Ստորև ներկայացված են առանցքային ղեկավար անձնակազմի հետ գործարքների ընդհանուր գումարները և մնացորդները.

	Գործարքի գումարը դեկտեմբեր 31-ի ավատված տարվա համար		***Մնացորդը առ 31 դեկտեմբերի***	
	2025թ.	***2024թ.***	***2025թ.***	***2024թ.***
Աշխատավարձ և պարգևավճարներ	15,051	15,003	-	-
Տրված փոխառություններ	7,000	-	-	-
Տրված փոխառությունների մարում	(7,000)	(53,456)	-	-
	15,051	**(38,453)**	-	-

Գործարքներ հիմնադրի հետ

Ստորև ներկայացված են հիմնադրի հետ գործարքների ընդհանուր գումարները և մնացորդները.

	Գործարքի գումարը դեկտեմբեր 31-ի ավատված տարվա համար		***Մնացորդը առ 31 դեկտեմբերի***	
	2025թ.	***2024թ.***	***2025թ.***	***2024թ.***
Տրված փոխառություններ	565,418	1,712,601	1,432,964	919,521
Տրված փոխառությունների մարում	(51,975)	(343,240)	-	-
Շահաբաժնի հայտարարում	-	1,769,459	-	-
Շահաբաժնի փոխմարում	-	(1,680,986)	-	-
Կանոնադրական կապիտալի համալրում	-	88,473	-	-
	513,443	**1,546,307**	**1,432,964**	**919,521**

(հազար ՀՀ դրամ)

17.Իրական արժեք և ռիսկերի կառավարում

Իրական արժեքի չափման գործընթացներ

Իրական արժեքի վերաբերյալ տեղեկատվության բացահայտման նպատակով Ընկերությունն առանձնացրել է ակտիվների և պարտավորությունների դասեր՝ հիմնվելով ակտիվների և պարտավորությունների բնույթի, առանձնահատկությունների և ռիսկերի, ինչպես նաև իրական արժեքի հիերարխիայի վրա:

Իրական արժեքների գնահատման համար օգտագործվել են հետևյալ մեթոդներն ու ենթադրությունները.

- Ընկերությունը գնահատել է, որ դրամական միջոցների և դրանց համարժեքների, ցպահանջ տրամադրված և ստացված փոխառությունների, առևտրային դեբիտորական պարտքերի, կարճաժամկետ վարկերի և առևտրային կրեդիտորական պարտքերի, իրական արժեքները հավասար են դրանց հաշվեկշռային արժեքներին այդ գործիքների կարճաժամկետ մարման ժամկետ ունենալու պատճառով: Այդ ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների գնահատված իրական արժեքները դասակարգվում են իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում:

- Ընկերության փոխառությունների և վարկերի իրական արժեքները որոշվում են ՝ զեղչելով համապատասխան դրամական մրջոցների հոսքերը՝ օգտագործելով նմանատիպ գործիքների համար շուկայական տոկոսադրույքը: Այս դեպքում ամենազգալի փոփոխականը զեղչման տոկոսադրույքն է: Այդ ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների գնահատված իրական արժեքները դասակարգվում են իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում:

Ռիսկերի կառավարում

Ֆինանսական գործիքներն օգտագործելիս Ընկերությունը ենթարկվում է հետևյալ ռիսկերին.

- Պարտքային ռիսկ,
- Իրացվելիության ռիսկ,
- Շուկայական ռիսկ,

Ընկերության ղեկավարությունը իրականացնում է վերահսկողություն այդ ռիսկերից յուրաքանչյուրի գծով, որն ամփոփված է ստորև:

Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ պատվիրատուն կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պայմանագրային պարտավորությունները Ընկերության նկատմամբ, և այն առաջանում է հիմնականում պատվիրատուներից ստացման ենթակա դեբիտորական պարտքերից: Ընկերությունը չի պահանջում գրավ ֆինանսական ակտիվների գծով: Պարտավորությունների կատարման գծով ռիսկերի գնահատումներ իրականացվում են որոշակի սահմանները գերազանցող գումարներ պահանջող պայմանագրային կողմերի համար, բացառությամբ կապակցված կողմերի:

Ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը ներկայացնում է պարտքային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը: Ստորև ներկայացված է հաշվետու ամսաթվի դրությամբ պարտքային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը.

	31 դեկտեմբերի 2025թ	***31 դեկտեմբերի 2024թ***
Տրամադրված փոխառություններ	1,664,138	1,521,566
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	2,118,707	2,470,854
Ավանդներ	485,682	-
Բանկային հաշիվների մնացորդներ	511,824	549,244
	4,780,351	**4,541,664**

(հազար ՀՀ դրամ)

17.Իրական արժեք և Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Պարտքային ռիսկին Ընկերության ենթարկվածությունը հիմնականում կախված է յուրաքանչյուր պատվիրատուի առանձնահատկություններից: Այնուամենայնիվ, ղեկավարությունը դիտարկում է նաև պատվիրատուների բազայի կառուցվածքը, ներառյալ այդ պատվիրատուների արդյունաբերության ճյուղերի ու երկրների դեֆոլտի ռիսկը, քանի որ այս գործոնները կարող են ազդեցություն ունենալ պարտքային ռիսկի վրա :

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չունի պատվիրատու (2024թ.-ին՝ 0), որոնց պարտքը ընկերության ավելի է քան 1,000,000 հազար ՀՀ դրամ: 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պարտավորությունները կազմել են ընդհանուր դեբիտորական պարտքերի մոտավորապես 96%-ը:

Ստորև ներկայացված է հաշվետու ամսաթվի դրությամբ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի գծով պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը՝ ըստ աշխարհագրական տարածաշրջանների.

հազ. դրամ	***31 դեկտեմբերի 2025թ***	***31 դեկտեմբերի 2024թ***
Տեղական	2,123,983	2,470,854
Արտերկիր	-	-
	2,123,983	**2,470,854**

Դրամական միջոցների և դրանց համարժեքների ինչպես նաև ավանդների մասով պարտքային ռիսկն ընդունելի է, քանի որ պայմանագրային գործընկերները ՀՀ-ում հեղինակավոր բանկեր են:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ կազմակերպությունը կարող է ունենալ դժվարություններ իր ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակ: Իրացվելիության ռիսկը կառավարվում է ղեկավարության կողմից ամենօրյա հիմունքով:

Որպես կանոն, Ընկերությունը ապահովում է ցպահանջ դրամական միջոցների այնպիսի չափի առկայություն, որը բավարար կլինի ակնկալվող գործառնական ծախսերը 60 օրվա ընթացքում ծածկելու համար՝ ներառյալ ֆինանսական պարտականությունների սպասարկման ծախսերը: Այս պարագայում հաշվի չի առնվում առանձնահատուկ հանգամանքների հնարավոր ազդեցությունը, որոնք հնարավոր չէ կանխատեսել, օրինակ՝ բնական աղետները:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2025թ. դեկտեմբերի 31-ի և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:Ներկայացված են համախառն և չզեղչված գումարները ,որոնք ներառում են հաշվարկված տոկոսների վճարումները:

	Ցպահանջ և մինչև 1 ամիս	***1-6 ամիս***	***6-12 ամիս***	***1 -5 տարի***	***5 տարի և ավելի***	***Ընդամենը***
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝						
Վարկեր և փոխառություններ	22	1,045	-	-	-	**1,067**
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր		2,180,370				**2,180,370**
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝						

«ԷՆԵՐՋԻ ՍՓՓԼԱՅ» ՍՊԸ				Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ		
Վարկեր և փոխառություններ		5,542		558,966		**564,508**
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր		2,383,603				**2,383,603**

(հազար ՀՀ դրամ)

17.Իրական արժեք և Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի իրական արժեքի փոփոխության ռիսկն է շուկայական գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկը բաղկացած է երկու տեսակի ռիսկերից՝ ա) տոկոսադրույքի և բ)արտարժույթի փոխարժեքի ռիսկերից: Շուկայական ռիսկի ներգործությանը ենթարկված ֆինանսական գործիքները ներառում են վարկերը և փոխառությունները, դրամական միջոցները և դրանց համարժեքները, տրամադրված փոխառությունները, առևտրային դեբիտորական և կրեդիտորական պարտքերը:

ա) տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքի ապագա դրամական հոսքերի իրական արժեքի տատանումների ռիսկն է շուկայական տոկոսադրույքի փոփոխության հետևանքով:

Ընկերությունը չունի պաշտոնական քաղաքականություն և ընթացակարգեր տոկոսադրույքների ռիսկերի կառավարման համար, քանի որ ընկերությունը չունի լողացող տոկոսադրույքներով փոխառու միջոցներ ղեկավարությունը այդ ռիսկը համարում է աննշան Ընկերության բիզնեսի համար:.

բ) արտարժույթային ռիսկ

Արտարժույթային ռիսկը ֆինանսական գործիքի ապագա դրամական հոսքերի իրական արժեքի տատանումների ռիսկն է արտարժույթների փոխարժեքի փոփոխության հետևանքով:

Ընկերությունը ենթակա է արտարժույթային ռիսկի՝ ֆունկցիոնալ արժույթի և վաճառքների, գնումների և փոխառությունների արժույթների անհամապատասխանության հետևանքով: Վերոհիշյալ գործարքները հիմնականում արտահայտված են ԱՄՆ դոլարով:

Արժութային ռիսկի գծով ղեկավարությունը սահմանում է սահմանաչափեր ռիսկերի նկատմամբ խոցելիության մակարդակի համար՝ ըստ արժույթի և ընդհանուր առմամբ: Դիրքերը վերահսկվում են ամսական հիմունքով: Ընկերությունը չի ենթարկվում արտարժույթային ռիսկի քանի որ հաշվետու տարվա վերջի դրությամբ չունի արտարժույթով արտահայտված պարտավորություններ:

18.Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Հաշվետու ժամանակաշրջանից հետո իրադարձություններ չեն եղել, որոնք կարող են պահանջել ճշգրտում կամ բացահայտում Ընկերության 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններում :